

4. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ THE POPULATION CENSUS ENUMERATION ПРОВЕДЕНИЕ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ

2001թ. հոկտեմբերի 10-19-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց մարդահամար՝ մարդահամարի հարցաթերթերը հարցման եղանակով լրացնելու միջոցով:

Ողջ հանրապետությունում բնակչությունը հաշվեգրվեց հստակ սահմանված պահի՝ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի կեսգիշերի՝ ժամը 12-ի դրությամբ:

«Հ 2001թ. մարդահամարի հաշվառման արդյունքում ստացվեցին տվյալներ բնակչության երկու կատեգորիայի վերաբերյալ.

- **մշտական բնակչություն**, որը ստացվում է մարդահամարի ժամանակ մշտապես ներկա (տվյալ համայնքում հաշվառված մարդահամարի պահին ներկա անձինք և տվյալ համայնքում չհաշվառված, սակայն, այդտեղ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ մեկ տարուց ավել բնակվող (ներկա անձինք) և ժամանակավոր բացակա անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Մշտապես ներկա բնակչություն համարվում են տվյալ համայնքում հաշվառված մարդահամարի պահին ներկա անձինք և տվյալ համայնքում չհաշվառված, սակայն, այդտեղ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ մեկ տարուց ավել բնակվող ներկա անձինք:

Ժամանակավոր բացակա են համարվում այն անձինք, ովքեր մշտապես (սովորաբար) բնակվում են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), սակայն մարդահամարի կրիտիկական պահին գտնվել են տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և նրանց բացակայության տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց:

- **առկա բնակչություն**, որը ստացվում է մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր ներկա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր ներկա են համարվում այն անձինք, ովքեր մարդահամարի կրիտիկական պահին գտնվել են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունում, սակայն նրանց մշտական բնակավայրը գտնվում է տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և

From October 10 to 19, 2001, a population census was carried out in the Republic of Armenia through the use of enumerators.

The population was counted for a specific point of time- midnight of October 9 dawnning on October 10.

In the result of the RA 2001 census count, data was obtained about two categories of the population:

- The de jure population includes those individuals who were permanently present or temporarily absent on the Census night, October 9/10, 2001.*

The permanently present population are considered those individuals who were either registered as residents at the place of enumeration and present on the census night, or not registered as residents at the place of enumeration but had resided there for more than 12 months.

The temporarily absent population are those individuals who were registered as residents at their place of enumeration but had been absent less than 12 months as of the census night.

- The de facto population, includes those individuals who were either permanently present(as defined above) or temporarily present on the census night, October9/10,2001.*

The temporarily present are considered those individuals whose permanent place of residence was located outside the boundaries of their place of residence (including the borders of Armenia) and whose duration of presence had not exceed 12 months.

During the All Union census of 1989 the family was regarded as unit of enumeration, as families were the general framework within which most individuals were identified. During the RA 2001Census so was the household (individual and institutional).

С 10-го по 19-ое октября 2001 года, методом опроса переписного листа населения, в Республике Армения провелаь перепись населения.

Все население республики было зарегистрировано к четко установленному моменту- в полночь 9-10 –ое октября-в 12 часов.

В результате учета переписи населения Республики Армения 2001 года получились данные о двух категориях населения:

- **постоянное население**, получается из суммы сложенных вместе численностей лиц, временно отсутствующих и, постоянно присутствующих (присутствующие в момент переписи, зарегистрированные в данной общине лица и присутствующие лица, проживающие больше одного года к моменту учета переписи населения, однако незарегистрированные в данной общине) во время переписи лиц.

Постоянно присутствующим населением считались зарегистрированные в данной общине и присутствующие к моменту переписи лица, и незарегистрированные, но проживающие к тому моменту больше одного года там лица.

- **Временно отсутствующими** считаются те лица, которые постоянно (обычно) проживают в данной общине-город, село, дом (строение), однако в момент переписи находились за пределами данной городской или сельской общины (в том числе республики) и длительность их отсутствия, к указанному моменту, была не больше чем год.

- **наличное население**, получается из суммы сложенных вместе чисел незарегистрированных к моменту переписи постоянно присутствующих и временно присутствующих лиц.

временно присутствующими считаются лица, которые в критический момент переписинаселения находились в данной общине город, село, дом (строение) или в организациях, являющихся временными пристанищами,однако постоянное место их

նրանց գտնվելու տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց: Եթե 1989թ. համամիութենական մարդահամարի ժամանակ որպես մարդահամարի դիտարկման միավոր հանդիսացել է ընտանիքը, ապա ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ, որպես այդպիսին հանդիսացավ տնային տնտեսությունը՝ անհատական և խմբային (ինստիտուցիոնալ):

Անհատական տնային տնտեսություն կարող է լինել.

1. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում բնակվող **մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը**, երբ անձն ինքնուրույն ապահովում է իրեն կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչով և ընդհանուր տնտեսություն վարելու համար տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները.

2. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող երկու և ավելի անձանցից բաղկացած տնային տնտեսությունը, որի անդամներն իրենց կենսապահովումն իրականացնում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ անուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և մեկը, և մյուսը:

Խմբային (ինստիտուցիոնալ) տնային տնտեսություն են կազմում այն անձինք, ովքեր մշտապես բնակվում են մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, հատուկ նշանակության դպրոցներում (օրնակ՝ երկրորդմանի կամ միակրդմանի ծնողազուրկ երեխաների գիշերօթիկներում), ծերերի և հաշմանդամների տներում, կրոնական հիմնարկներում (օրնակ՝ մենաստաններում), բանտերում, ուղղիչ աշխատանքային գաղութներում և նման այլ հիմնարկներում, այսինքն՝ կազմում են համատեղ բնակվող բնակչության խմբեր և սովորաբար ենթարկվում են ընդհանուր կանոնների և սնվում են համատեղ: Նման տնտեսություններով բնակվող բնակչության կազմի մեջ չեն մտցվում սպասարկող անձնակազմի տնային տնտեսությունները:

ՀՀ 2001թ. մարդահամարի ժամանակ յուրաքանչյուր տնային տնտեսության համար լրացվեց առանձին հարցաթերթ:

Մարդահամարի անցկացման գործընթացը ներառեց հետևյալ փուլերը՝

1. նախնական շրջագայություն՝ հոկտեմբերի 5-8-ը,
2. մարդահամարի անցկացում՝ հոկտեմբերի 10-19-ը,
3. վերահսկիչ շրջագայություն՝ հոկտեմբերի 20-25-ը:

Individual household can be either:

1. a one-person household who makes provision for his or her own food or other essentials for living without combining with any other person to form part of a multi-person household; or

2. a multi-person household, a group of two or more persons living together who make common provision for food or other essentials for living. The persons in the group may pool their incomes and may, to a greater or lesser extent, have a common budget; they may be related or unrelated persons or constitute a combination of persons both related and unrelated.

Institutional household is formed by people who permanently reside in orphanages, boarding schools, schools with special significance (e. g. boarding houses for orphaned of single parent children), asylums for the aged and the disabled, religious institutions (e. g. monasteries), prisons, work reformatories and other similar institutions, that is they form groups of population living together and usually obeying common rules and having meals together. Personnel responsible for the running of an institution but not living there are not included in the structure of the population living in such households.

During the RA 2001 census a separate questionnaire was filled in for each household.

The process of carrying out the census included the following stages:

- 1. preparatory field work, October 5-8,*
- 2. census enumeration, October 10-19,*
- 3. post-enumeration control round, October 20-25.*

жительств находится за пределами данной общины (в том числе республики), и длительность их проживания, к указанному моменту, была не больше чем год.

Если во время всесоюзной переписи населения 1989 года единицей рассмотрения переписи явилась семья, то во время переписи населения населения РА 2001 года, как таковой явилось индивидуальное и групповое (институциональное) домашнее хозяйство.

Индивидуальным домашним хозяйством может быть:

1. Домашнее хозяйство состоящее из одного лица проживающего в одной жилой единице или одной его части, когда лицо самостоятельно обеспечивает себя всем жизненно-необходимым и не объединяет свои средства с другими лицами, проживающими в данной жилой единице, для ведения общего хозяйства.

2. Домашнее хозяйство состоящее из двух и более лиц, совместно проживающих в отдельной жилой единице или в одной его части, или в нескольких строениях, члены которого их жизнеобеспечение осуществляют ведением общего хозяйства целым или частичным объединением своих средств. Эти лица могут быть связаны между собой родственной или брачной связью, или не быть родственниками, или и то и другое.

Групповое (институциональное) домашние хозяйства составляют те лица, которые постоянно проживают в детских домах, школах-интернатах, школах особого значения (например в интернатах для детей-сирот), в домах для престарелых и инвалидов, в религиозных учреждениях (например монастырях), тюрьмах, исправительно-трудовых колониях и других подобных учреждениях, т.е. составляют группы совместного проживания населения и обычно подчиняются общим канонам и вместе питаются. В состав населения, проживающего подобными хозяйствами не входят домашние хозяйства обслуживающего персонала.

Во время переписи населения РА 2001 года, для каждого домашнего хозяйства был заполнен отдельный опросный лист.

Процесс проведения переписи населения включил в себя следующие этапы:

- 1.предварительный обход 5-8-с октября
- 2.проведение переписи 10-19-с

**4.1. ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԱԽՆԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ
PRELIMINARY ROUND OF DWELLING UNITS
ПЕРВИЧНЫЙ ОБХОД ДОМОВ (СТРОЕНИЙ)**

Նախնական շրջագայության նպատակն այն էր, որպեսզի հաշվարարը ծանոթանար և ճշգրտեր իր հաշվային տեղամասի սահմանները, այցելեր իր տեղամասում տեղակայված բոլոր տներն ու շինությունները, համապատասխան նշումներ կատարեր իր հուշատետրում, բնակիչներին տեղեկացներ անցկացվելիք մարդահամարի մասին, անհրաժեշտության դեպքում պարզաբաներ դրա անցկացման նպատակներն ու խնդիրները, և պարզեր, թե հոկտեմբերի 10-19-ը ընկած ժամանակահատվածում, երբ է նպատակահարմար այցելել տվյալ տնային տնտեսություն՝ նրա անդամներին հաշվառելու համար:

Հաշվարարները մարդահամարի անցկացման համար անհրաժեշտ նյութերը հրահանգիչ-հսկիչներից ստացան միայն մարդահամարի նախօրեին (հարցաթերթեր, հսկիչ թերթեր (Ձև 4), տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև 5), վերահսկիչ փաստաթուղթ (Ձև 6), հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիր (Ձև 6-քաղաքային, գյուղական), ուղեկցող թերթ (Ձև 10), հաշվարարի հուշատետր քաղաքներում (Ձև 11-քաղաքային) և գյուղերում (Ձև 11- գյուղական), գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել, գոյության միջոցների աղբյուրների ցանկ, հաշվարարի վկայական, պայուսակ, հաշվային տեղամասի հատակագիծ, գրենական պիտույքներ):

The goal of the preliminary round was to let the enumerator get acquainted with and verify the boundaries of his enumeration area, visit all the houses and constructions located there, make corresponding notes in his note-book, inform the inhabitants about the upcoming census, explain the aims and problems of its realization in case of need and find out when it's suitable to visit that household to register its members within the period of October 10-19.

The enumerators received the necessary materials for the realization of the census from the supervisors on the eve of the census (questionnaires, Control-sheets (Form 4), a Reference of being enumerated during the census (Form 5), Supervising document (Form 6), Summary reports for enumeration area (Form 6 – urban, rural), Accompanying list (Form 10), enumerator's Note-book in towns (Form 11 - urban) and villages (Form 11 - rural), a Note for those people who can hardly be found at home), contents list of means of livelihood, Certificate of enumerator, potfolio, scheme map of the enumeration area, writing materials).

3. կոնտրոլային օրնային 20-25-ը օկտյաբրյա.

Целью предварительного обхода было то, чтобы счетчик переписи ознакомился и уточнил бы границы своего расчетного участка, посетил все расположенные на его участке дома и строения, сделал в своей записной книжке соответствующие заметки, проинформировал жителей о проводимой переписи населения, при необходимости разъяснил бы цели и задачи его проведения и выяснил когда, именно, в промежутке 10-19 октября, целесообразно посещение данного домашнего хозяйства для подсчета его членов.

Необходимые для проведения переписи населения материалы, (переписного листа, контрольные бланк (Форма 4), справка о прохождении переписи населения (Форма 5), контрольный документ (Форма 6), сводная ведомость счетного участка (Форма 6-городская, сельская), записная книжка счетчика переписи в городах (Форма 11-городская) и селах (Форма 11-сельская), записки тем людям, которых трудно застать дома, перечень источников средств существования, удостоверение счетчика переписи, портфель, план счетного участка, канцелярские принадлежности) счетчики переписи получили от своих инструкторов-контролеров только на кануне переписи.

**4.2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ (ԱՆՑԿԱՅՈՒՄ)
CENSUS COUNT (CONDUCTION OF THE CENSUS)
СБОР(ПРОВЕДЕНИЕ) ДАННЫХ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ**

Մարդահամարի հաշվառումն անցկացվեց հրահանգավորված հաշվարարների կողմից 10 օրվա ընթացքում՝ հոկտեմբերի 10-19-ը ներառյալ: Հաշվարարների կողմից բանավոր տրվող հարցերի բնակչության պատասխանները նրանք լրացնում էին հարցաթերթի մեջ: Մարդահամարի մյուս կարևոր պահանջներից մեկն էլ այն էր, որ բնակչության մասին տեղեկությունները հարցաթերթերում լրացնելիս հաշվարարը չէր պահանջում պատասխանը հաստատող որևէ փաստաթուղթ: Իսկ բնակչության վայրը որոշելիս հաշվի էր առնվում ոչ թե գրանցման, աշխատանքային կամ էլ ծառայողական վայրը, այլ անձի բնակության վայրը, այսինքն այն տունը, բնակարանը,

The census enumeration was carried out by the trained enumerators during 10 days, from October 10 to 19 including. The population's answers to the questions asked orally by the enumerator were filled in the questionnaires. One of the other important claims of the census was that the enumerator did not demand any document ascertaining the answer while filling in the information in the questionnaire. And while deciding the place of residence not the place of registration, work or office was regarded but the place of dwelling, that is the house or flat where the respondent was residing for the moment of the census.

Учет переписи населения, проинструктированными счетчиками переписи был проведен в течении 10-и дней- 10-19 октября включительно. Ответы населения на устные вопросы счетчиков записывались ими в переписные листы. Одним из других важных требований переписи населения было то, что при заполнении переписных листов информацией о населении, счетчики не требовали какой-либо подтверждающий ответ документ. А при определении места проживания учитывалось не место прописки, работы или служебное место, а место проживания лица, т.е тот дом или квартира, где находился опрашиваемый в момент переписи

որտեղ հարցվողը գտնվել էր մարդահամարի պահին:

Հաշվարարները լրացրեցին մարդահամարի հարցաթերթերը համաձայն «ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգի՝ հարցաթերթից ընթերցելով յուրաքանչյուր հարց: Համաձայն «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի՝ «Մարդահամարը կրում է պարտադիր բնույթ և հարցվողները պարտավոր են ճշգրիտ և սպառիչ պատասխաններ տալ մարդահամարի հարցաթերթերի բոլոր հարցերին:

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու մարդահամարի հարցաթերթում իր մասին գրանցված տեղեկություններին»:

Մարդահամարի հարցաթերթը բաղկացած էր 3 բաժիններից՝

1. հասցեամասից,
2. 32 անհատական հարցերից,
3. տնային տնտեսության բնակության պայմանները բնութագրող 15 հարցերից:

(տես հարցաթերթը)

Մարդահամարի առաջին օրը մարդահամարի տեղամասի վարիչները վերահսկում էին աշխատանքի ներկայացած բոլոր հաշվարարների ու հրահանգիչ-հսկիչների պարտադիր ներկայությունը: Որևէ հաշվարարի կամ հրահանգիչ-հսկիչի բացակայության դեպքում նրանք պարզում էին պատճառը և անհրաժեշտության դեպքում փոխարինում ռեզերվի հաշվարարով կամ հրահանգիչ-հսկիչով:

Հաշվարարները հաշվառումն անցկացնելիս շրջագայեցին իրենց տեղամասերի բոլոր տներն ու շինությունները՝ անկախ նրանից բնակելի էին դրանք թե՛ ոչ, քանի որ չէր բացառվում ոչ բնակելի շինություններում որևէ մեկի բնակության փաստը:

Մարդահամարի հաշվառման ընթացքում տեղեկություններ ստացվեցին.

- Անհատական տնային տնտեսություններից: Ընդ որում, մարդահամարի ընթացքում բացակա բնակիչների վերաբերյալ տեղեկությունները ստացվում էին հարևաններից, բնակչահագործման տեղամասերից և համատիրություններից:
- Խմբային տնային տնտեսություններից (սոցիալական նշանակություն ունեցող կազմակերպություններ՝ մանկատներ, ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատներ, ինչպես նաև՝ ՀՀ տարածքում տեղակայված օտարերկրյա զորակայաններ, ուղղիչ-աշխատանքային հիմնարկներ և գաղութ-բնակավայրեր):
- Ժամանակավոր կացատեղերից (հյուրանոցներ, հիվանդանոցներ

The enumerators filled in the census questionnaires in accordance with the directions "About the order of filling in the RA 2001 Census questionnaire" reading each question from the questionnaire. According to the Paragraph 10 of the RA Act "On census" "The census is of compulsory nature and the respondents must give accurate and comprehensive answers to all the questions in the census questionnaire.

Everybody has the right to get acquainted with the information about themselves filled in the questionnaire".

The census questionnaire consists of 3 parts:

1. address part;
2. 32 individual questions;
3. 15 questions characterizing housing conditions of the household.

(See the questionnaire)

On the first day of the census the the census area managers supervised the presence of every enumerator and supervisor at work. In case of absence of any enumerator or supervisor they found out the reason for it and, in case of need replaced him/her by an enumerator or supervisor in reserve.

While carrying out the census the enumerators made a round over all the houses and constructions in their areas irrespective of their being habitable or not, as the fact that somebody was dwelling in inhabitable constructions wasn't excluded.

During the census count information was received:

- From individual households. Moreover, information about dwellers absent during the census was received from their neighbours, housing maintenance sections and condominium departments;
- From institutional households (establishments with social significance, such as orphanages, asylums for the aged and the disabled, as well as foreign stations located in the territory of the RA, reformatory work establishments and settlements);
- From temporary abodes (hotels, hospitals, boarding schools and investigator isolation cells);
- From people without a permanent place of residence, the homeless,

населения.

Счетчики заполняли переписные листы, читая каждый ее вопрос, согласно инструкции «О порядке заполнения переписных листов переписи населения РА 2001 г.». Согласно статье 10 закона РА «О переписи населения»: «Перепись населения несет обязательный характер и опрашиваемые обязаны давать точные и исчерпывающие ответы на все вопросы переписных листов переписи населения.

Каждое лицо имеет право ознакомиться с заполненной о нем в переписном листе информацией».

Переписной лист населения состоит из 3-х разделов:

1. адресной части
2. 32-х индивидуальных вопросов
3. 15-и вопросов, характеризующих условия проживания домашних хозяйств. (см.анкету)

В первый день переписи, заведующие переписным участком контролировали обязательное присутствие явившихся на работу всех счетчиков и инструкторов-контролеров. В случае отсутствия любого счетчика или инструктора-контролера, они выясняли причину и при необходимости заменяли счетчиком или инструктором-контролером резерва.

Счетчики, проводя учет, обошли все расположенные на их участках дома и строения, независимо от того они были жилые или нет, т.к. не исключался факт проживания кого-либо в нежилых строениях.

В течении учета переписи населения получились данные:

- От индивидуальных домашних хозяйств. Причем, данные относительно отсутствующих во время переписи населения жильцов получались от соседей, ЖЭУ и кондоминиумов.
- От групповых домашних хозяйств (организации социального значения-детские дома, дома-интернаты для престарелых и инвалидов, а также расположенных на территории РА иностранных военных баз, исправительно-трудовых учреждений и колоний).
- Временных пристанищ (гостиницы, больницы, школы-интернаты, а также следственные изоляторы):
- От лиц неимеющих постоян-

կողմից, որի տարածքում գտնվում էր նրանց գիշերելու վայրը:

«Հ 2001թ հոկտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերվա ժամ 12.00-ից մինչև առավոտյան ժամը 8.00-ն իրականացվեց օդային և ցամաքային սահմաններով (Բավրա, Մեղրի, Այրում, Գոգավան, Բագրատաշեն) Հայաստանի Հանրապետությունից մեկնող և Հայաստանի Հանրապետություն ժամանող այն անձանց հաշվառումը, որոնք կարող էին դուրս մնալ հաշվեգրումից, քանի որ հաշվարարների աշխատանքը սկսվել էր հոկտեմբերի 10-ի առավոտյան ժամը 8-ից: Համաձայն ընդունված մեթոդաբանության մեկնողների և ժամանողների վերաբերյալ համապատասխան տվյալները լրացվեցին մարդահամարի «Հարցման թերթ»-ում (Ձև1-Ա):

«Հ 2001թ. մարդահամարի ժամանակ ՀՀ Ներքին գործերի, ՀՀ Ազգային անվտանգության և ՀՀ Պաշտպանության նախարարությունների կողմից առանձնացված և հրահանգավորված հաշվարարների միջոցով անցկացվեց փակ տարածքներում գտնվող բնակչության առանձին խմբերի՝ զինծառայողների, քննչական մեկուսարաններում գտնվող և ուղղիչ աշխատանքային հիմնարկներում պատիժը կրող անձանց հաշվառումը: Ընդ որում, ժամկետային զինծառայություն անցնողները, վարժական հավաքների զորակոչվածները, պայմանագրային զինծառայության մեջ գտնվողները, համաձայն «ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի մասին» հրահանգի, հաշվեգրվեցին իրենց տնային տնտեսությունների կազմում:

«Հ Արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցված կարգով արտասահմանում և Հայաստանի ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից առանձնացված և համապատասխան ուսուցում (հրահանգավորում) անցած աշխատակիցների միջոցով հաշվեգրվեցին օտարերկրյա պետություններում (միջազգային կազմակերպություններում) ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում ու հյուպատոսական հիմնարկներում աշխատող ՀՀ քաղաքացիները և օտարերկրյա պետություններում նրանց հետ բնակվող ընտանիքի անդամները:

«Հայաստանի Հանրապետությունում արտասահմանյան պետությունների դիվանագիտական, առևտրական և այլ ներկայացուցչություններում աշխատող, դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ-ում բնակվող նրանց ընտանիքի անդամները՝ միջազգային նորմերի համաձայն, մարդահամարի ժամանակ չհաշվառվեցին:

count as enumerators start at 8 am of October 10. According to the adopted methodology the corresponding data about departing and arriving people were filled in the Census "Interrogatory sheet" (Form 1-a).

During the RA 2001 census, the registration of special groups of population located in closed areas, such as servicemen, people in investigation isolation wards or bearing their punishment in reformatory work institutions, was carried out by the enumerators selected and trained by the RA Ministries of Internal Affairs, of National Security and of Defense. Besides, those in periodic military service, in training sessions and in contract military service were counted with their households according to the directions "About the order of filling in of census RA 2001 Census questionnaire (carrying out the census)".

In coordination with the RA Ministry of Foreign Affairs, the citizens of the RA working in diplomatic representations and consular institutions of the RA in foreign countries (International organizations) and their family members residing with them in foreign countries were registered by the employees selected by representations and consulates of the RA abroad and received corresponding training .

Foreign citizens with diplomatic immunity working in diplomatic, trade and other representations of foreign countries in the RA and their family members residing with them in the RA were not registered during the census according to the International norms. And foreign citizens without diplomatic immunity residing in the territory of the RA and their family members were registered according to the place of residence by the enumerators of the corresponding enumeration areas.

During the census conduction the Census Department personnel of the NSS RA were sent on mission trips to the NSS RA Marz agencies and their district subdivisions to assist the census staff. They made a circuit over the census areas, checked up selectively the filled in questionnaires, analyzed the errors made while filling the documents and elucidated the clauses of the directions which were unsatisfactorily mastered by the enumerators. As a rule

Выбывающих Республики Армения и прибывающих в Республику Армения по воздушным и сухопутным границам РА (Бавра, Мегри, Айрум, Гогаван, Баграташен) тех лиц, которые могли остаться вне учета, т.к работа счетчиков началась в 8.00 часов утра 10-го октября. Согласно принятой методологии, соответствующие данные о прибывающих и выбывающих были заполнены в «Переписном листе» (Форма 1-А) переписи населения.

Во время переписи населения РА 2001г., регистрация отдельных групп населения находящихся на закрытых территориях, в исправительно-трудовых колониях и следственных изоляторах, а также военнослужащих была проведена с помощью счетчиков, выделенных и проинструктированных со стороны министерств Внутренних дел РА, Национальной безопасности РА и Обороны РА. Причем лица, проходящие срочную военную службу, призванные на учебные сборы, военнослужащие на контрактной основе, согласно инструкции «О порядке заполнения переписного листа населения (проведения переписи) РА 2001г.», были зарегистрированы в составе их домашних хозяйств.

Регистрация граждан РА, работающих в дипломатических представительствах и консульских учреждениях РА в иностранных государствах (международных организациях), и их семей, была осуществлена с помощью прошедших соответствующую подготовку (инструктаж) работников, выделенных со стороны консульств и представительств Армении за границей, в согласовании с министерством иностранных дел РА.

Работающие в дипломатических, торговых и других представительствах иностранных государств в РА, наделенные дипломатической неприкосновенностью, иностранные граждане и их семьи, проживающие в РА, согласно международным нормам не были зарегистрированы. А иностранные граждане и члены их семей, проживающие на территории РА и не наделенные дипломатической неприкосновенностью, были зарегистрированы со стороны счетчиков счетных участков, соответствующих

4. Մարդահամարի անցկացումը-The Population Census Enumeration-Проведение переписи населения

Իսկ անձեռնմխելիությանը չօժտված ՀՀ տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, հաշվառվեցին ըստ բնակության վայրի՝ համապատասխան հաշվային տեղամասերի հաշվարարների կողմից:

Մարդահամարի անցկացման ընթացքում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչության աշխատակիցները գործառնվեցին ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ և դրանց տարածքային բաժիններ՝ մարդահամարի աշխատողներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Նրանք շրջում էին մարդահամարի տեղամասերը, ընտրանքային կարգով ստուգում լրացված հարցաթերթերը, վերլուծում փաստաթղթերի լրացման ժամանակ թույլ տրված սխալները, պարզաբանում հրահանգի այն դրույթները, որոնք անբավարար էին յուրացվել հաշվարարների կողմից: Որպես կանոն, առաջին օրերին ավելի քիչ հարցաթերթեր էին լրացվում: Լրացված հարցաթերթերում կային սխալներ և թերություններ, հարցերի պատասխանների տրամաբանական անհամապատասխանություններ:

Յուրաքանչյուր օրվա վերջում հաշվարարները ներկայանում էին իրենց հաշվային տեղամասերը և հրահանգիչ-հսկիչներին ստուգման էին հանձնում իրենց լրացրած հարցաթերթերը: Մարդահամարի անցկացման ընթացքի մասին հատուկ հաշվետվական ձևերով հաղորդագրություններ էին ներկայացնում. հրահանգիչ-հսկիչները մարդահամարի տեղամասի վարիչներին, նրանք էլ մարզային գործակալության տարածքային բաժնին, տարածքային բաժինները՝ մարզային գործակալություն, իսկ մարզային գործակալությունները՝ ՀՀ ԱՎԾ-ի մարդահամարի վարչություն՝ նախորդ օրվա տեղեկատվության վերաբերյալ: Այսպիսով ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունում հանրապետության մասշտաբով հավաքվում էր մարդահամարի ընթացքի յուրաքանչյուր օրվա վերաբերյալ տեղեկատվություն աճողական թվերով:

fewer questionnaires were filled in on the first days. There were errors, faults and logical discrepancies of the answers to the questions in the filled-in questionnaires.

At the end of each day the enumerators presented themselves at their supervisory area in order to give the filled-in questionnaires for checking to the supervisor. As to the information of the previous day about the process of census the supervisors presented special message forms to the Census area managers, the latter to the district subdivisions of NSS RA Marz Agencies, the latter to the Marz agencies and the latter to the NSS RA Census department. Thus, the NSS RA Census department compiled information about the process of the census enumeration for each day in the republic with increasing numbers.

их месту проживания.

Во время переписи населения, работники управления переписи населения Национальной статистической службы РА были командированы в областные агентства НСС РА и их региональные отделы, с целью оказания помощи работникам переписи населения. Они обходили участки переписи, выборочно проверяли заполненные переписные листы, анализировали ошибки, допущенные во время заполнения документов, объясняли те положения инструкции, которые не до конца были усвоены счетчиками. В первые дни, как правило заполнялось очень мало переписных листов. В заполненных переписных листах были ошибки и недостатки, логические несоответствия ответов.

В конце каждого дня, счетчики представляли свои счетные участки и заполненные ими документы сдавали на проверку инструкторам-контролерами.

Информацию о процессе проведения переписи в специальном отчетном виде представляли: и н с т р у к т о р ы - к о н т р о л е р ы - з а в е д у ю щ и м п е р е п и с н ы м у ч а с т к о м, т е р е г и о н а л ь н о м у о т д е л у о б л а с т н о г о а г е н с т в а, р е г и о н а л ь н ы е о т д е л ы - о б л а с т н ы м а г е н с т в м, а т е, о п р о ш е д ш е м д н е в у п р а в л е н и е Н С С Р А п о п е р е п и с и н а с е л е н и я. Т а к и м о б р а з о м, в у п р а в л е н и е Н С С Р А п о п е р е п и с и н а с е л е н и я, п о в с е й т е р р и т о р и и А р м е н и и с о б и р а л а с ь и н ф о р м а ц и я п о н а р о с т а ю щ и м ц и ф р а м, о к а ж д о д н е в н о м х о д е п е р е п и с и н а с е л е н и я.

4.3. ՀԵՏՄԱՐԴԱՀԱՄԱՐԱՅԻՆ ՈՆՏՐՈՆՔԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ POST-ENUMERATION CONTROL ROUND ОТБОРНЫЙ ПОСТПЕРЕПИСАННЫЙ КОНТРОЛЬНЫЙ КОНТРОЛЬНЫЙ ОБХОД

Վերահսկիչ շրջագայությունը (շրջայց) անցկացվեց մարդահամարի հաշվեգրումից հետո՝ հաշվարարների կողմից, ընտրանքային կարգով, բնակչության հաշվառման ամբողջականությունն ու ճշտությունը ստուգելու համար: Ընդ որում, տվյալ հրահանգչական տեղամասի սահմաններում հաշվարարը վերահսկիչ շրջագայությունը անց էր կացնում ոչ թե իր, այլ մյուս հաշվային տեղամասում: ՀՀ 2001 թ. մարդահամարի ավարտից հետո՝ հոկտեմբերի 20-25-ը, հրահանգչ-հսկիչներն իրենց տեղամասերի հաշվարարների հետ միասին, կատարեցին ընտրանքային վերահսկիչ շրջագայություն: Այն անցկացվեց բոլոր հաշվային տեղամասերում, դրանցից յուրաքանչյուրում ընդգրկելով բնակելի միավորների (շինությունների) 10%-ը:

Վերահսկիչ շրջագայության ընթացքում ստուգվեց՝ արդյոք տվյալ տանը (շինությունում) բնակվող տնային տնտեսությունում հաշվառման ենթակա բոլոր անձինք են անցել մարդահամար: Հաշվարարը համեմատում էր յուրաքանչյուր տնային տնտեսությունում հաշվառման ենթակա մարդկանց թվաքանակը մարդահամարի հարցաթերթում՝ նրանց անվանական առկայության հետ: Եթե տնային տնտեսությունում ի հայտ էին գալիս հաշվառման ենթակա անձինք, որոնց հաշվարարը չէր հաշվառել, հրահանգչ-հսկիչը կամ հաշվարարը տվյալ անձի վերաբերյալ տվյալները գրանցում էին նրանց տնային տնտեսության հարցաթերթում՝ ավելացնելով նրան տնային տնտեսության անդամների ցուցակում և լրացնելով նրա վերաբերյալ տեղեկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ համապատասխան մարդահամարային փաստաթղթերը:

Եթե վերահսկիչ շրջագայության ժամանակ բացահայտվում էին հաշվառումից դուրս թողնված տնային տնտեսություններ, դրանց համար լրացվում էին մարդահամարի նոր հարցաթերթեր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ համապատասխան փաստաթղթեր: Շրջագայության արդյունքում լրացված հարցաթերթերը համարակալվում էին տվյալ հաշվային տեղամասի վերջին հարցաթերթից հետո՝ հերթական համարակալմամբ: Հատուկ ուշադրություն էր դարձվում հարցաթերթերում բացակայողների և ժամանակավոր ներկա գտնվողների վերաբերյալ կատարված գրառումների ճշտությանը:

The control round was carried out after the realization of the census count by the enumerators to check up the completeness and correctness of the population count, with the use of sampling (random). Besides, the enumerator made the supervisory round not in his/her enumeration area but in another one - within the limits of the supervisory unit. The post-enumeration control round had been taken in 2001, October 20-25, after the RA 2001 census count was over, the supervisors together with the enumerators of their unit. It was carried out in all the enumeration areas, including 10 percents of the dwelling units in each one.

During the control round it was checked whether all the people due to be registered in the dwelling had been counted. The enumerator compared the number of people due to be registered in every household with its nominal availability in the questionnaire. If there was found persons due to be registered in the household but had been missed by the enumerator, the supervisor (or the enumerator) registered the data about that person in the questionnaire of his/her household, adding the name in the list of the household members and filled information about him/her and, in case of need, the corresponding other census documents as well.

If during the control round households omitted from the registration were revealed new census questionnaires were filled in for them, and in case of need, corresponding documents as well. The questionnaires filled in the result of the round were numbered to after the last questionnaire of that enumeration area with a successive number. Special attention was paid to the correctness of notes about absent and temporarily present people in the questionnaire.

The changes made in the result of the control round were also reflected in the Summary reports of that enumeration area.

Контрольный обход был проведен для проверки точности и целостности счета жителей счетчиками переписи населения был проведен отборный постпереписной контрольный обход. При чем счетчик переписи населения данного инструкторского участка делал контрольный обход не в границах своего, а другого счетного участка. После окончания переписи, с 20-25 октября инструктор-контролеры вместе со счетчиками участков сделали выборочный контрольный обход своих участков. Он был проведен на всех счетных участках, охватив в каждом из них по 10% единиц (строний).

Во время контрольного обхода было проверено, все ли жители данного дома (строения), лица домашнего хозяйства, подлежащие переписи, прошли перепись населения. Счетчик учета сравнивал число людей каждого домашнего хозяйства, подлежащих счетом с поименным их присутствием в переписных листов п. Если в домашних хозяйствах выявлялись лица, подлежащие учету, которых счетчик переписи не учел, контролер-инструктор или счетчик переписи записывал данные об этой личности в переписном листе его домашнего хозяйства, приписывая его имя к списку членов домашнего хозяйства и заполняя данные о нем, а при необходимости также соответствующие переписные документы.

Если во время контрольного обхода выявлялись домашние хозяйства, которые не были учтены, то для них заполнялись новые опросные листы. А в случае необходимости-и необходимые документы. В результате обхода заполненные листы нумеровались очередным номером последнего опросного листа счетного участка. Особое внимание обращалось на правильность записей в переписных листах об отсутствующих и временно присутствующих лицах. В результате контрольного обхода имеющие место изменения находили свое отражение в сводной

Վերահսկիչ շրջագայության արդյունքում տեղ գտած փոփոխություններն իրենց արտացոլումն էին գտնում նաև տվյալ հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրում:

Բնակելի միավորների ընտրանքը կատարվեց մարդահամարի տեղամասի վարիչի և հրահանգիչ-հսկիչի հետ համատեղ՝ հաշվարարի հուշատետրի 2-րդ աղյուսակում բնակելի շինությունների համարների վրա:

Այսպիսով, ՀՀ մարզերի մարդահամարի, հրահանգչական և հաշվային բոլոր տեղամասերում հոկտեմբերի 20-ից 25-ը անցկացվեց բնակելի տների (շինությունների) ընտրանքային վերահսկիչ շրջագայություն (շրջայց): Ընտրանքն անցկացվեց Հայաստանի Հանրապետության 830.432 բնակելի միավորների մոտավորապես 10%-ում: 78.557 բնակելի միավորներում հաշվարարների կողմից մարդահամարի ժամանակ սխալմամբ էին հաշվառվել 128 մարդ, հաշվառումից դուրս էին մնացել 2.504 մարդ: Այսպիսով, ՀՀ-ում բնակելի միավորների (շինությունների) 10% ընտրանքային վերահսկիչ շրջագայության ընթացքում մարդահամարի ժամանակ չհաշվառված մարդկանց թվաքանակը կազմել է 2.376 մարդ (2.504-128 մարդ):

Վերահսկիչ շրջագայության (շրջայց) ժամանակ հաշվարարների կողմից հայտնաբերված սխալմամբ հաշվառված անձանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է Երևան քաղաքում, որի 283.363 բնակելի միավորներից ընտրված 25.624-ում հայտնաբերվել է հաշվարարների կողմից չհաշվառված 656 մարդ: Հանրապետության 10-ը մարզերում վերահսկիչ շրջագայության ընթացքում հաշվարարների կողմից հայտնաբերված սխալմամբ հաշվառված մարդկանց թվաքանակի ամենաբարձր տոկոսը գրանցվել է Շիրակի մարզում: Մարզի 77.941 բնակելի միավորներից վերահսկիչ շրջագայություն (շրջայց) անցած 7.622 շինություններում հայտնաբերվել է չհաշվառված 360 մարդ: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի մարզում՝ 64.258 բնակելի միավորներից ընտրված 6.377-ում չէր հաշվառվել 14 մարդ:

Բացի այդ, միջազգային փորձագետների առաջարկով բնակչության հաշվառման ամբողջական ընդգրկման նպատակով ՀՀ 2001 թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովը մամուլով և հեռուստատեսությամբ հայտարարությամբ դիմեց հանրապետության բոլոր այն բնակիչներին, որոնց 2001 թ. հոկտեմբերի 10-19-ը մարդահամարի նպատակով հաշվարարները չէին այցելել, խնդրանքով, որ մինչև հոկտեմբերի 31-ը այդ մասին տեղեկացնեն ՀՀ ԱԿԾ մարդահամարի վարչություն և կամ ՀՀ ԱԿԾ մարզային գործակալություններ: ՀՀ ԱԿԾ մարդահամարի վարչությունում և մարզային գործակալություններում 2001 թ. հոկտեմբերի 20-

The selection of housing units was made by the Managers of census area together with the supervisor using as a base the list of dwellings in Table 2 of the enumerator's note-book.

So the control round of dwelling units was taken in census, supervisory and all the enumeration areas of the RA marzes. The round was made in nearly 10 % of 830.4 thous. housing units of the RA.. 128 persons were double counted and 2,504 people were not registered at all in 78,557 housing units during the census. So 2.376 (2,504-128) persons were not registered in 10% of the dwelling units of the RA during the sample supervisory control round of the census.

As enumerators had found out during the sample round, the highest percent of miscount was in Yerevan, 656 persons within 25,624 housing units selected out of 283,363 ones. Among 10 RA marzes Shirak marz had the highest percent of those who were double counted and 360 miscounted persons were found in 7,622 housing units out of those 77,941. Armavir marz had the lowest percent of the miscount: 14 persons within 6,377 housing units out of 64,258 ones.

Besides, in order to assure complete coverage, by the recommendation of International experts, the National committee of RA 2001 Census organization and conduction made an announcement by media and press addressing all those citizens of Armenia, who were not visited by enumerators for census count within the period of October 10-19. The announcement asked those not registered to visit NSS RA Census administrative office and/or NSS RA Marz agencies, till the 31st of October. During the period of October 20-31 duty hours of responsible workers were established in NSS RA Census Department and Marz agencies to register the visits and telephone calls of the non-registered. Committees were formed and in case of received calls from marzes and Yerevan their members visited those, and filled in questionnaires for missed households and individuals. More than 400 telephone calls and visits were registered during this undertakings.

ведомости счетных данных. Отбор жилых единиц был выполнен совместно с заведующим переписного участка и инструктором-контролером на базе данных таблицы 2 записной книжки счетчика.

Таким образом, на инструкторских и переписных участках переписи населения марзов РА, с 25-29 октября был проведен выборочный контрольный обход жилых домов. Отбор был проведен в 830,432 жилых единицах РА-около 10 процентов. В 78,557 жилых единицах счетчиками переписи были повторно переписаны 128 человек. В не переписи остались 2,504 человека. Таким образом во время контрольного выборочного обхода 10 процентов жилых единиц в РА, численность людей, оставшихся вне переписи во время переписи населения составила 2,376 человек.

Самый высокий процент повторно учтенных людей во время контрольного обхода был зарегистрирован в городе Ереване: из 283,363 жилых единиц в отобранный 25,624 обнаружены не считанные счетчиками 656 человек. Во время контрольного обхода 10 марзов республики самый высокий процент неправильно переписанных счетчиками людей зарегистрирован в Ширакском марзе. При контрольном обходе 77,941 жилой единицы марза в 7,622 жилых строениях обнаружены не переписанных 360 человек. Самый низкий показатель записан в Армавирском марзе: из 64,258 жилых единиц в отобранных 6377 не были переписаны 14 человек. Кроме этого по предложению международных экспертов с целью целостного охвата учета населения общегосударственная комиссия через печать и телевидение обратилась ко всем тем жителям, которые с 10-19 октября 2001 года не прошли перепись населения, с просьбой сообщить об этом до 31 октября в управление национальной статистической службы РА или в марзовые агентства национальной статистической службы. В управлении НСС

Տարբեր երկրներում վերջին տարիներին անցկացված մարդահամարների ժամանակ, ցավոք, արձանագրվել են և՛ սպանություններ, և՛ ընդվզումներ, և՛ զանգվածային ձերբակալություններ ու դատավարություններ: Այս առումով, ՀՀ 2001թ. մարդահամարը հաճելիորեն տարբերվեց այլոցից, ինչը գլխավորապես պայմանավորված էր մեր բնակչության արտառոց բարեհամբյուրությամբ: Այնուհանդերձ, ՀՀ 2001թ. մարդահամարի ընթացքում ևս արձանագրվեցին որոշակի անցանկալի դեպքեր և, հատկապես, ծիծաղաշարժ դիպվածներ: Այսպես՝

- երբ առանձնատան բակում շունը հարձակվում է հաշվարարի վրա և բռնում նրա ոտքը, որից սարսափահար եղած հաշվարարը վայր է գցում հարցաթերթերով պայուսակը և լեղապատառ դուրս փախչում, տանտերը, սաստելով շանը և հասնելով նրա հետևից, կատակում է, որ իր շան բարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդահամարի ժամանակ իրեն չեն ուզում հաշվառել,

- երբ ստուգվում էր հաշվարարների հուշատետրերի և նրանց կողմից լրացված հարցաթերթերի համապատասխանությունը, պարզվեց, որ հաշվարարներից մեկն իր հուշատետրի «Դիտողություններ և առաջարկություններ» բաժնում արձանագրել էր, թե մարդահամարի ժամանակ ինչ արժեքի չափով էին մաշվել իր կոշիկները, և պահանջել էր այդ չափով փոխհատուցում,

- երբ Երևանի կենտրոն թաղամասում, բազմաբնակարան շենքում հաշվարարը հաշվեգրելու նպատակով թակում է բնակարանի դուռը, ներսից տղամարդու թավ ձայնով բղավում են, թե. «Չեք տեսնում, որ տանը մարդ չկա», իսկ մեկ այլ դեպքում էլ մի տղամարդ հայտարարում է, որ ինքն իրեն մարդ չի համարում, այդ իսկ պատճառով չի կարող ենթարկվել հաշվառման,

- երբ բնակարանում հաշվարարը տանտիրուհու պատասխաններով լրացնում էր հարցաթերթի տնային տնտեսության անդամների վերաբերյալ հատվածը, ուստի երեխայի անուն, ազգանունը շարադրելիս՝ տանտիրուհու անուսից բարձրաձայն միջանունում է և պահանջում, որ այդ երեխայի անվան դիմաց չգրվի իր ազգանունը, քանի որ նա կասկածում է, որ ինքն է երեխայի հայրը,

- երբ մարդահամարի ավարտից անցել էր ընդամենը մի քանի օր, մարդահամարի վարչություն է ներխուժում մի բնակչուհի և միջանցքում բարձրաձայնում. «Ու՞ր է մարդահամարի դեկավարը,

-A woman entered the Census Department after some days it had finished and cried out in the corridor: "Where is the census chairman, they have dared to register my father-in-law in my house. They want to take my house away from me! Return my questionnaire".

-Arnavir marz incident is also worth mentioning. An enumerator was kidnapped(to marry) on the first census day in the city Vagharshapat. Only the portfolio full of questionnaires was returned after the negotiations.

Census also resulted in the formation of new families. Several marriages were registered between census temporary workers.

· Когда во дворе индивидуального дома набросилась на счетчика переписи населения собака и взялась за ногу, счетчик в ужасе бросает сумку полную переписными листами и выбегает, хозяин, унимая собаку шутит, мол злость собаки была обусловлена тем, что во время переписи населения ее не засчитали.

· Когда были проверены записные книжки счетчиков и записанное соответствие переписных листов, выяснилось, что один из счетчиков переписи населения в отделе своей записной книжки “замечания и предложения” записал, что во время переписи населения в какой мере в денежном выражении износилась обувь потребовал возмещения убытков.

· Когда в центральном квартале Еревана в многоэтажном доме счетчик переписи населения с целью переписи стучит в дверь квартиры, изнутри мужским бархатным голосом кричат “не видите, что дома никого нет”, а в другом доме один мужчина заявляет, что он сам себя за человека не принимает и по этой причине не может подвергаться переписи.

· Когда в квартире счетчик ответами домохозяйки заполняет пункт о положении членов домашнего хозяйства, записывая имя, фамилию младшего ребенка, муж домохозяйки громогласно вмешивается в разговор и требует, что бы не писали против имени этого ребенка его фамилию, так как он сомневается в том, что это его ребенок.

· Когда после окончания переписи населения прошло несколько дней, в управление переписи врывается одна жительница и в коридоре громогласно говорит: “Где руководитель переписи населения, это что за безобразие, свекровь записали в моем доме, значит имеют цель отобрать у меня квартиру, верните мне мой переписный лист”.

- Достоен памяти так же случай происшедший в Армавирском марзе. В г. Вагаршпате в первый день переписи похитили счетчика переписи населения. После переговоров вернули только сумку переписи населения с переписными листами.

4. Մարդահամարի անցկացումը-The Population Census Enumeration-Проведение переписи населения

կվարը, սաի՞նչ խայտառակություն է, սկետորիս գրանցել են իմ տանը, ուր են մնալստակունեն տունս ձեռքիցս խլելու, ետ սվելքիմ հարցաթերթը»:

- հիշարժան էր նաև Արմավիրի մարզում տեղի ունեցած դեպքը: Վաղարշապատ քաղաքում մարդահամարի առաջին օրը փախցրել էին հաշվարարին: Բանակցություններից հետո ետ էր վերադարձվել միայն հաշվարարի պայուսակը՝ հարցաթերթերով:

Մարդահամարը նպաստեց նաև նորաստեղծ ընտանիքների կազմավորմանը: Մարդահամարի ավարտից հետո մարդահամարի ժամանակավոր աշխատողների միջև գրանցվեցին մի շարք ամուսնություններ:

Перепись населения также способствовала образованию новых семей. После окончания переписи населения между временными работниками были зарегистрированы ряд браков.